

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիս ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

Ընթացիկ աշխատանքներ

Նախնական տվյալներով 2017 թվականի 7 ամիսների ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 18985.5 մլն դրամ՝ պլանավորված 17592.4 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 7.9 տոկոսով կամ 1393.1 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 19.6 տոկոսով կամ 3116.5 մլն դրամով:

Հուլիս ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 3716.6 մլն դրամ՝ պլանավորված 3678.6 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 1.0 տոկոսով կամ 38.0 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 23.0 տոկոսով կամ 694.0 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 82 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 4 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 46 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել է 53.8 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 25 ստուգում՝ 25.9 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները, որոնց արդյունքում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման 15, ապօրինի գործունեության ու ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման մեկական դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 99 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 61-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 9-ը՝ ապրանքների շրջանառության և ծառայությունների մատուցման, ինչպես նաև իրացման փաստացի գների չափագրման, 7-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի ու

դրոշմավորման կանոնների պահպանման, 5-ը՝ հարկային հաշվանցումների և (կամ) վերադարձի հիմնավորվածության և 17 այլ ուսումնասիրություններ:

ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 74 վարչական գործ՝ 65.9 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 10 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 9.1 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 85 վարչական գործով սահմանվել է 1.1 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 9175 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 6914:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 52 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 110 վարձու աշխատողի՝ 18.8 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 35 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

2017թ. 2-րդ եռամսյակի արդյունքներով ԱՀ էկոնոմիկայի նախարարություն է ներկայացվել ԱՀ գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվությունը:

Ուսումնասիրվել են պետական կառավարման այլ մարմինների կողմից ներկայացված իրավական ակտերի նախագծերը:

ՀՀ և ԱՀ հարկային մարմինների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

«Հարկային ծառայության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հաշվետու ամսում կայացել է հարկային ծառայողների հերթական ատեստավորում, որի արդյունքներով 37 հարկային ծառայողներից 12-ը համապատասխանել են զբաղեցրած պաշտոններին, իսկ 25 ծառայողների մասով հանձնաժողովը կայացրել է վերապատրաստում անցնելու որոշում:

Հասարակայնության հետ կապ

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

«Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30-րդ հոդվածով սահմանված կարգով հրապարակվել են հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 351, ելքագրվել՝ 239 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 4 գրություն: